



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ ՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՏԱՐԵԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Երեքշաբթի, 6 Յունուարի երեկոյեան, տեղի ունեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան աւանդական ընթրիքը, Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ, Մոնթպելլօ:

Երեկոն նախաձեռնութիւնն էր Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան եւ կազմակերպուած էր Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Ընթրիքի երեկոյին բացումը կատարուեցաւ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ հոգեւորականաց դասուն սրահ մուտքով եւ ծննդեան շարականներու երգեցողութեամբ: Կատարուեցան Թաթախի արարողութիւնն ու սեղաններու օրհնութիւնը:



Ընթրիքին ներկայ էին աւելի քան 600 հիւրեր եւ ազգայիններ, որոնք եկած էին տոհմիկ ու մշակութային մթնոլորտի մէջ գիրար շնորհաւորելու եւ Նոր տարուան համար

բարեմաղթութիւններ

փոխանակելու:

Հանդիսավարն էր Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան, որ ձեռնհասօրէն վարեց յայտագիրը: Ան առաջին հերթին բեմ հրաւիրեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենապետուհի Տիկին Մարիամ Կարապետեանը, որ երեկոյին կազմակերպիչ մարմինին անունով ողջոյնի խօսք արտասանեց ու բարի վայելում մաղթեց ներկաներուն ու պաշտօնական անձնաւորութիւններուն:

Ողջոյնի ու բարեմաղթութեան խօսք արտասանեց Ազգային Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան:

Սրտի խօսք արտասանեց Հայաստանի պետութեան ներկայացուցիչը՝ Տիար Արմէն Լիլոյեան:

Ձեռնարկի ընթացքին կիրարկուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն բերին »Տօնական« նուագախումբը, Արմինէ եւ Զնարիկ Ներկարարեան, Մելինէ Համբարձումեան, եւ Ռոզ եւ Ալեք

Փիլիպոս Ազգային վարժարանի աշակերտներեն Կարեն Արապեան եւ Անի Մնացականեան:

Երաժշտական կատարումներուն դաշնակի վրայ ընկերացաւ բազմավաստակ երաժշտագետ Փրոֆ. Լեւոն Աբրահամեան, որ բաժին ունեցած էր գեղարուեստական այս հատուածներուն պատրաստութեան մէջ:

Երեկոյին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Աւարտին, ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիլա»ն ու «Ի վեհ բարձանց»ը:

Մասնակիցները տուն գացին գեղեցիկ երեկոյի մը յիշատակները տանելով իրենց հետ:

(Ընթրիքին մանրամասնութիւնները տեսնել սոյն կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):

GREAT SHOW OF SUPPORT AT THE PRELATE'S TRADITIONAL NEW YEAR AND CHRISTMAS DINNER

On the evening of Tuesday, January 6th, over six hundred Prelacy supporters and friends gathered at “Bagramian” Hall of Holy Cross Cathedral in Montebello for the Prelate’s traditional New Year and Christmas Dinner.



The evening officially began with the entrance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and clergy members into the hall, candles in hand and with the singing of Christmas hymns, followed by the Prelate’s invocation.

Following his welcoming remarks, Master of Ceremonies Rev. Fr. Vazken Atmajian successively invited Ladies Auxiliary Chairlady Ms. Mariam Karapetian and Executive Council Chair Dr. Garo Agopian to deliver their remarks.

Consul General of Armenia the Honorable Armen Liloyan also delivered his remarks.

The evening also included an artistic program which was comprised of performances by the “Donagan” band, Armine and Knarig Nergarian, Meline Hampartsoumian, and Rose and Alex Pilibos 10th grade students Garen Arabian and Ani Mnatsaganian. The singers were accompanied on the piano by the renowned Professor Levon Arahamian.

The evening concluded with the Prelate’s message, benediction, and the collective singing of the Pontifical and Cilician anthems.

Please visit the news section of our website for the full press release and photos.

ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Նորթ Հոլիվուտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Անդրանիկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Ծննդեան օրը: Ս. Պատարագը մատուցեց, քարոզեց եւ ջրօրհնէք կատարեց շրջանի հոգեւոր մատակարար՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, St. Paul Assyrian-Chaldean Catholic Եկեղեցւոյ մէջ:

Ներկայ էին Ազգային Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան, վարչութեան անդամներ, եւ շուրջ 400 հաւատացեալներ: Ս. Խաչի կնքահայրն էր՝ Նշանիկ Տէր Աբելեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Թեմիս երիտասարդաց խմբակներէն անդամներ:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Խօսք առին Եկեղեցւոյ կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Տիար Խաչիկ Թիթիզեան եւ Ազգային Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեան: Անոնք ողջունեցին անդրանիկ Ս. Պատարագին ներկայ եղող հաւատացեալները եւ հրաւիրեցին որ մասնակցութիւն բերեն Եկեղեցւոյ աշխատանքներուն:

Փակման խօսքը արտասանեց Եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Հայր Սուրբը, յայտարարելով որ այսուհետեւ, ամէն Կիրակի յետմիջօրէին, ժամը 2:00-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի նոյն Եկեղեցւոյ մէջ, իսկ Չորեքշաբթի երեկոները, ժամը 6:30-էն 8, տեղի պիտի ունենայ Եկեղեցական կարճ արարողութիւն եւ Սուրբ Գրային Սերտողութիւն:

Եկեղեցւոյ հասցէն է՝ 13050 Vanowen Street, North Hollywood:

FIRST DIVINE LITURGY CELEBRATED AT THE NORTH HOLLYWOOD PARISH

The first Divine Liturgy at the newly established North Hollywood parish was celebrated on Tuesday, January 6th, on the Feast of the Birth and Theophany of our Lord Jesus Christ. Very Rev. Fr. Muron Aznikian celebrated the Liturgy, delivered the sermon, and conducted the blessing of water ceremony at St. Paul Assyrian-Chaldean Catholic Church. Members of the Prelacy youth choir participated in the singing of the Liturgy.

Among the four hundred faithful in attendance were Executive Council Chair Dr. Garo Agopian and council members. The godfather of the cross was Nishanig Der Apelyan.

A reception took place following the services, during which the Chairman of the committee overseeing the establishment of the parish Mr. Khatchig Titizian delivered his remarks, as did Dr. Garo Agopian, both of whom welcomed the faithful and urged them to actively participate in the growth of the parish.

Closing remarks were delivered by Fr. Muron during which he announced that Divine Liturgy will hereafter be celebrated every Sunday at 2:00 p.m., and Bible study classes will take place every Wednesday from 6:30 p.m. to 8:00

p.m.

The address of the church is 13050 Vanowen Street in North Hollywood.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Յ.Յ.Դ. ՕՐՈՒՄՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Կիրակի, 11 Յունուարի երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Յայրը ներկայ պիտի ըլլայ Յայ Յեղափոխական Դաշնակցութեան Օրուան տօնակատարութեան: Յանդիսութիւնը տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլ Յայ Սքուլի հանդիսասրահին մէջ:

Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեան ու Վարչութեան անդամներ: Գլխաւոր բանախօսն է Յ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան: Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր:

PRELATE TO ATTEND A.R.F CELEBRATION

The annual A.R.F. celebration will take place on Sunday, January 11th, at 6:00 p.m. at Glendale High School Auditorium.

The keynote speaker is ARF Lebanon Central Committee representative Hovig Mekhitarian. An artistic program will also take place.

The Prelate will attend the event, accompanied by Executive Council Chair Dr. Garo Agopian and council members.
